Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15026

891.99
ত-516

1902

49

ԵՐԳԻՉ ԳՐԻԳՈՐ ՏԱԼԻԵԱՆՑԻ

Հերամ

ՔՆԱՐԸ

Յարմարեցրած իր ինքնյորինած եւ պարսկական եղանակների վերայ

„Երգը մի տեսակ զանգակ է, որ Թմրած-Ներին զարթեցնում է և մարդի սիրտն ու հոգին գրաւում զէպ իրան“,

ԱՂ. ՄԽԻԹԱՐ.

2003

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Աբրագամիպ-Տպարան Ա. Մ. Մալխասեանցի
1902

891.99
Ճ-13

41

891.99
Շ-51
49
144

ԵՐԳԻՉ ԳՐԻԳՈՐ ՏԱԼԻԵԱՆՑԻ

ՔՆԱՐԸ

Ցարմարեցրած իր ինքնյորինած եւ պարսկական եղանակների վերայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՅՈՒԴԱԲԵՐ

ՍԵՐՈԲՅԱՆ-ԻՆՃԻԿՅԱՆԻ

Ի՛ 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 Թ. ԹԻՖԼԻՍ

4154

Дозволено цензурою, Тифлисъ 11-го Февраля 1902 года.

ԳՐԻԳՈՐ ՏԱԼԻԵԱՆՑԻ

ՔՆԱՐԸ

Ի ՅԻՇԱՏԱԿ
ՆԻԶԱՐԻ
ՄԵԲՈՐԵԱԿ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1929 ԹՎԻՆ

Նտառի մէջ նստած մենակ,
Խոր վերքերով, մօտ գետին,
Կլկլալով մաքուր գետակ.
Սլանում էր դէպ ծովին։

Գարնան քաղցր ժամանակն էր,
Ծառեր ծաղկած քնքուշիկ,
Ձլվլալով բիւր թռչուններ,
Դիմում իւրեանց հայրենիք։

Տափը ծածկուած կանաչով,
Օրօրում էր մեղմ քամին,
Ծառ ու կանաչ արմատներով,
Երջանիկ պարում էին։

Ժամը հասաւ գիշերային,
Եղնիկ, այծեամ ձագերով,
Ամենքն իրանց բոյն գնացին,
Սար ու քար թռչկոտելով,

Երբ աստղերը երևացին,
Լուսինն էլ քիչ բարձրացաւ,
Ցիշեցնում էր մէջ գետակին,
Հայրենիքիս վիշտն ու ցաւ։

Սիրտս լցուաւ, լալիս էի,
Հեռու տանից ու տեղից,
Միայնակ ես օտար էի,
Հեռու—հեռո՜ւ իմ երկրից։

Ամպոտ գիշեր, լուսնեակ չկայ,
Մէջդ սիրոյ կրակ չկայ,
Աղերսում եմ ինձ չես լսում,
Մի յուսատու բան չես ասում։

Քունս կտրած, աչքերս լաց,
Քեզ եմ նայում բազկատարած,
Քոյ քնքուշիկ տերևները—
Բաց, թող բուժին իմ վերքերը։

Դու, սիրուն կոյս, ինձ հաւատայ,
Երդվումեմ, երկինքը վկայ,
Բացի քեզնից—ոչ մի էակ,
Չկայ իմ սրտին սփոփանք։

Քեզ եմ սիրում, քեզ միայնակ,
Մի հեռանար իմ աղաւնեակ.
Խորասուզուած եմ մտքերով,
Տառապումեմ միշտ քոյ սիրով։

Ունայնութիւն է աշխարհը,
Ինձ համար պահիր քոյ սէրը,
Կարեկից լեր, մի տար տանջանք,
Մի պատճառեր վիշտ տառապանք։

Կռունկները եկան անցան,
Երգում էին խիստ քաղցրաձայն,
Ոչ սուր ունին ոչ հրացան...
Ընկերական սէրն է նրանց,
Միշտ անբաժան պահում սրտանց։

Կանցնին ծովեր, դաշտեր, լեռներ,
Բաց են արել լայն լայն թևեր,
Օդը ճղում են անվեհեր...
Բարձրանալով կապոյտ երկինք,
Սլանում են դէպ հայրենիք։

Երկայնավիզ կռունկները,
Մաքուր է նոցա սրտերը,
Ընկերական շղթաները...
Կապեց նրանց անքակտելի,
Որ շատին է նախանձելի։

Տես, իմ ընկեր, անմեղ թռչնին,
Ինչպէս է սիրում ընկերին,
Մատաղ լինիմ ես քոյ գլխին...
Անկեղծ սիրով եկ համբուրուինք,
Միմեանց հետ սրբութեամբ ապրինք։

Ա՜խ, անուշ գարուն,
Քաղցր է քոյ անուն,
Գոյն գոյն ծաղիկներ,
Սփռէ սարերուն։

Դու չքնաղ գարուն,
Մատաղ քոյ հոգուն,
Լեր սպեղանի—
Այրած սրտերուն։

Ո՜հ, գարուն—գարուն,
Նախշունիկ սիրուն,
Եկ կեանք պարգևէ,
Ծաղկած դաշտերուն։

Վաղուց կարօտ ենք,
Քոյ մաքուր օդին,
Արի արձակէ,
Ցուրտ ձմռան գօտին։

Քոյ մեղմիկ քամին—
Զարկ մեր ճակատին,
Քոյ քաղցրիկ հոտով,
Լցրու մեր հոգին։

Քանի մէկ, քանի,
Ցուրտ ձմեռ լինի,
Ինչ աչք տեսնի քեզ,
Հազար երանի։

Մինչ երբ ագռաւներ,
Կարգան մեզ վայեր,
Թող նոցա տեղակ,
Երգեն սոխակներ։

Գարուն աննման,
Դրախտ եդեմեան,
Մեծայոյս եմ որ—
Պիտ գաս անպայման։

Ի՞նչ շատ ուշացար,
Դու մեր փրկարար,
Մինչև երբ թողնես,
Մեր յոյսն անկատար։

ԽՐԱՏ ՈՐԴԷԿԻՍ

Սիրուն մանկիկ աշխարհ եկար,
Աշխարհում փոքրիկ մարդ ծնար,
Միշտ թոթովէ, կամ թէ լուռ կաց,
Քեզ համար այս է վիճակուած։

Թոթովանքդ անուշ է,
Խօսքերդ քաղցր նուշ է,
Իսկ չարկամներիս համար,
Սրտերը ծակող փուշ է։ } 1.

Լաւ է լռել, քան թէ խօսել,
Կամ խօսելով վատ բան ասել,
Որքան կարես լեզուդ պահէ,
Մի թողնիր որ ոտքդ սահէ։

Փշոտ է մեր այս աշխարհը,
Ոտքի տակ կերթայ տկարը,
Միշտ աշխատիր կանգուն մնաս,
Որ դու էլ ոտքի տակ չերթաս։

Մաքուր սրտով լաւ հայ եղիր,
Սուրբ կրօնդ պինդ պահպանիր,
Ազգութիւնդ մի ուրանայ,
Որ կեանքդ աճի—զօրանայ։

1) Այս տողերը պէտք է կրկնել ամեն տան վերջում։

Սիրէ ուսում, սիրէ կարդալ,
Միշտ ջանա դու պատուով մնալ,
Սիրէ դպրոցն ու գիտութիւն,
Որ մշտապէս մնաս կանգուն։

Զայն տուր աքաղաղ,
Մեր երկրագործին,
Որ վաղ վեր կենայ,
Գնայ իր գործին։

Զայն տուր տանտիկնոջ,
Թող քնից զարթի,
Ընտանեաց համար,
Լաւ ճաշ պատրաստի։

Զայն տուր աղջկերանց,
Տուն—դուռ իստակեն,
Տան անդամների,
Շորերը կարկատեն։

Զայն տուր տղայոց,
Գործիքներն առնեն,
Ու պապենական,
Արտերը վարեն։

Զայն տուր թող մոլի
Խոտերը քաղհանեն,
Ու խուրձ կապելով,
Կրակով այրեն։

Երբոր դու ինձ չես սիրում,
Ո՞ւր երեսդ ցոյց կտաս,
Ես որ մեռայ, իմ հոգեակ,
Արդեօք ի՞նչ շահ կստանաս։

Աղերսելով խնդրումեմ,
Խղճա, հոգիս հանեցիր,
Այդ կրակոտ աչերով,
Սիրտս բոցերով լցիր։

Այդքան անձրև ժայռերին,
Եթէ թափուէր երկնքից,
Անշուշտ կը փափկանային,
Որոնք պինդ են պողպատից։

Այսքան տարուան արցունքս,
Չը փափկացուց քոյ սիրտը,
Ինչ անգութ ես, սիրուն կոյս,
Կտրատում ես իմ սիրտը։

Կայծակ խփեց քարերին,
Բոցով լցրեց սար ու ձոր,
Դու էլ կայծակ մի լինիր,
Ես տկար եմ ու անզօր։

Լաւ է աչքս չը տեսնի,
Քոյ կախարդող պատկերդ,
Ամեն ժամ, ամեն վայրկեան,
Չը վառեն ինձ աչերդ։

Ի՞նչ պէտք է այն ծաղիկը,
Որ հոտ չունի և ոչ համ,
Ի՞նչ պէտք է այն սիրուհին,
Որ անգութ է—անխնամ։

Հազար երանի քեզ վտակ ամբիծ,
Որ միշտ ազատ ես դու սիրոյ ճանկից,
Խոխոջալով, մրմնջալով ընթանում,
Հանգստանալ կուզես քո ծով մօր ծոցում,

Գնա, գնա, փայլուն վտակ,
Բաց թևերդ զերթ ծիծեռնակ,
Շատ տարի է որ կսպասեմ,
Որ սիրուհուց կարօտս առնեմ։ } 1.

1) Այս տողերը պէտք է կրկնել ամեն տան վերջում,

Ճանապարհին թէ սիրելուս հանդիպար,
Դու ինձանից նրան անուշ բարև տար,
Ա՛ռ պատկերս քո սրտի մէջ պինդ պահիր,
Երբոր տեսար, խնդրումեմ նրան յանձնիր։

Ասա՛ նրան, որ ես վաղուց կսպասեմ,
Սիրոյ մասին մի քանի խօսք պիտ ասեմ,
Թող շտապի և շուտով գայ ինձ հասնի,
Գուցէ մեռնեմ, այլևս ինձ չը գտնի։

Գնաս բարեաւ, սիրուն վտակ բարեբեր,
Կը բարձրանամ ես էլ կամաց սարն իվեր,
Անդ կսպասեմ—սարի ծալրին— գագաթին,
Դու էլ գնա՛ գտիր իմ անուշ եարին։

Հրեշտակասիրտ Գուրգեն Մխիթարեանցի յիշատակին.

ԴԻՄԱՌՆԱԲԱՐ ԵՐԳՈՒԱԾ

Արեւ, ծագէ ու լոյս տուր,
Իմ տխուր դամբարանին,
Թող հրճուի, ցնծա, խայտայ,
Իմ մանկական սուրբ հոգին։

Թռչնիկ երգէ
Անուշ ձայնով,
Անուշնս յիշէ
Մեղմիկ երգով։ } 1

Դեռ աշխարհից համ չառած,
Մտայ այս նեղ դամբարան,
Տխուր շիրմիս բոլորը,
Վայրի ծաղիկներ բուսան։

Խեղճ ծերունի պապիկս,
Ի՞նչ յոյսեր ունէր վերաս,
Ափսո՛ս, խորհուրդն անկատար
Մնաց, բազդից չունէր մաս։

Ով սուրբ Հոգի երկնային,
Խեղճ պապիս մխիթարէ,
Նրա վշտածեծ սիրտը,
Վեհ զօրութեամբդ սփոփէ։

Հասակակից մանուկներ,
Չը մոռանաք Գուրգէնիս,
Ինձ անմոռաց յիշեցէք,
Այս երգարանն կարդալիս։

Թող ձեր կեանքը երկարի,
Զօրանաք ու մեծանաք,
Հասուն խելքով մեր ազգին,
Պիտանի անդամ դառնաք։

1) Այս տողերը պէտք է կրկնել ամեն տան վերջում։

Հարաւային քամին փչեց,
Արտս ու այգիս չորացուց,
Իմ ծաղկազարդ հովիտները,
Ոտքից գլուխ խունացուց։

Ռահւոծ էի մի ժամանակ,
Կազմուածքս զերթ պողպատ,
Առնչալիս իմ ձայնիցը,
Դիպչում էին պատէպատ։

Տաք խորշակը շունչս կտրեց,
Թոքերս բորբոքուեցին,
Բժիշկները ինձ բուժելիս,
Ալ արիւնս քամեցին։

Այդ անպիտան քամին խլեց,
Կենդանութիւնս աշխարհից,
Հալեց—մաշեց ոսկորներս,
Զրկուեցի իմ գործերից։

Մերձաւորներս ինձ չեն սիրում,
Մնացել եմ շուարած,
Դու ինձ փրկէ այս տանջանքից,
Ով բարերար մեծ Աստուած։

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻԻԳ. ԱՐԵՐ
ՍԵՐՈՐԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

Բլբուլիկ ջան բլբլա,
Բլբլոցիդ ես մատաղ,
Բարակ աղբիւր ճլճլա,
Ճլճլոցիդ ես մատաղ։

Բլբուլ, վարդը փշոտ է,
Քնքուշ սիրտդ կը ծակէ,
Շուշան սիրէ ու գովէ,
Շուշանը քեզ կարօտ է,

Այսքան տարի տանջուեցար,
Վարդից ինչ շահ ունեցար,
Սիրէ դու այն ծաղիկը,
Որ նուիրէ քեզ սիրտը։

Երբոր գարունը բացուի,
Դու այստեղից հեռացի,
Գնա այնտեղ սպասէ,
Ուր որ շուշան կը բացուի։

Սիրտս փորէս եթէ տանեն,
Գիտցէք որ ես դեռ կապրիմ,
Հոգիս եթէ ինձնից հանեն,
Գիտցէք որ ես դեռ կապրիմ։

Եթէ շունչս իսպառ կտրեն,
Գիտցէք որ ես դեռ կապրիմ,
Թէ ուժերս ինձնից խլեն,
Գիտցէք որ ես դեռ կապրիմ։

Թէ բազուկներս կտրատեն,
Գիտցէք որ ես դեռ կապրիմ,
Ամբողջ մարմնով անդամհատեն,
Գիտցէք որ ես դեռ կապրիմ։

Թէ լեռները վերաս բառնան,
Գիտցէք որ ես դեռ կապրիմ,
Թէ բարեկամքս ինձնից դառնան,
Գիտցէք որ ես դեռ կապրիմ։

Թէ թիւնաւոր նետով խփեն,
Գիտցէք որ ես դեռ կապրիմ,
Թէ արիւնս զարկեն թափեն,
Գիտցէք որ ես դեռ կապրիմ։

Բայց թէ անուշս ու լիշատակս,
Երբոր կորչին՝ կը մեռնիմ,
Կամ թէ վերաս արատ մնաց,
Յայնժամ ստոյգ կը մեռնիմ։

Ինչու՞ ես մերժում խնդիրս,
Նազելի կոյս իմ հրեշտակ,
Ինձ նման քեզ սիրող չունիս,
Խղճա ինձի աստղ ու լուսնակ։

Քանի տարի է տանջում ես—
Անխղճաբար քոյ կարօտով,
Դիշերները սփոփում ես.
Միայն ունայն երազներով։

Չէ՞ որ վաղուց խոստացել ես,
Մնալու ինձ հետ անբաժան,
Հանգիստ հոգիս վրդովել ես,
Ու կախարդել ինձ յաւիտեան։

Կամ մի անգամից սպանիր,
Իջեցուր գերեզման, հող լից,
Կամ սիրոյդ ծովից ազատիր,
Խնամէ—մի զրկեր կեանքից։

Դեռ ջահիլ եմ, աշխուժս վառ,
Սիրտ տուր՝ սիրոյդ համար երգեմ,
Ինչպէս ցանկաս կլնիմ յարմար,
Միայն գիրկդ հոգիս աւանդեմ։

Քեզ խաբում են ուրիշները,
Սխալուած ես դու՝ դրաչար,
Ափսոս է քոյ մատաղ եանքը,
Լսիր ինձ, չը լինիս խշուառ։

Գեղեցկութեանդ վերայ լոյս մի դնիր,
Ուսում չունիս, հանճար չունիս, խելք չունիս,
Սիրուն, հեռուն գիտէ, հպարտ մի լինիր,
Վարդի նման դուն էլ շուտ կը թառամիս։

Դու սիրում ես մի լաւ երիտասարդի,
Թշուառ, նա քեզի հետ կատակ է անում,
Անկաշտ բաց, ամեն ինչ լաւ հասկացի,
Նա խելք ունի, անկիրթ աղջիկ չի սիրում։

Թէկուզ լինիս դու երկնային հրեշտակ,
Ինչու ես պէտք, որ դու չունիս զարգացում,
Զարդերով պճնուած, լեր մի արեգակ,
Դատարկ կարաս կլնիս, թէ չունիս ուսում։

Եկաւ անուշ գարունը,
Հանդ է գնում սիրունը,
Նորա գրաւիչ դէմքը,
Պղտորեց իմ արիւնը։

Ցողում է մեղմիկ անձրև,
Վարդը բացեց իր տերև,
Սևաչեայ չքնաղ կոյսը,
Ինձ չը տուեց մի բարև։

Կկկլում է առուակը,
Փայլում է արեգակը,
Ճախրում է դէպի երկինք,
Իմ խոսող աղունակը։

Նստաւ սալի գագաթին,
Սփռեց մազերը կուրծքին,
Ինձ նման սիրող սիրտը,
Գցեց ծովի յատակին։

Գիշեր, առ երեսդ գնայ,
Մութ դէմքդ տեսնել չեմ ուզում,
Հանգէպս կանգնած մի մնայ,
Երբէք խաւարը չեմ սիրում։

Մութ—մռայլ է կերպարանքդ,
Վնասակար նա և կեանքդ,
Անտանելի է հոսանքդ,
Ուղղութեանդ չեմ համակրում։

Ժամերդ խիստ վատ ու ծանր են,
Մաղդկանց վերայ շուտով կազդեն,
Խաւարասաշտ մարդիք կուզեն
Քեզ, ես խաւար չեմ ճանաչում։

Դու ատում ես լոյսն ու արև,
Մեղք է քեզ տալ անուշ բարև,
Մի գայ կանգնի գլխիս վերև,
Քեզ ոտքից գլուխ եմ ատում։

Գնա՛—գնա՛, հերիք մնաս,
Լաւ անուն բնաւ չունենաս,
Տալիքդ չունենամ մաս—
Քեզնից բաժին այս աշխարհում։

Նաւը սուրաց, ծովը շարժուեց,
Խաղաղ սիրտս վշտով լցրեց,
Երջանկութիւնս ինձնից խլեց...
Բէգը տարաւ իմ սիրուհին
Վա՛յ, հազար վա՛յ իմ արևին։ } 1

Սև ամպերը ինձ պատեցին,
Նաւը աչքիցս խլեցին,
Ինձ սիրուհուց բաժանեցին...

Օդը ծանր է, շունչս կտրաւ,
Ա՜ւաղ, գնաց ձեռքիս թռաւ,
Իմ բաժին աշխարհն աւերաւ...

Այս տողերը ամեն տան վերջում պէտք կրկնել։

Քնաղ աղջիկ, ինչ անգութ ես,
Մինչ երբ սիրոյդ գերի անես,
Սիրտդ քար է, թէ պողպատ է,
Որ ինձ հանապազ կը խայթէ։

Սիրուն աղջիկ, ինձ մօտ արի,
Քեզ եմ մնում քանի տարի,
Համբերելով ճարս կտրաւ,
Ցաւս մէկ էր՝ հազար դարձաւ։

Մի լինիր այդքան անողորմ,
Քեզ եմ դիմում աղիողորմ,
Անզգայ ես, սէր չը գիտես,
Որ ինձ այդքան խիստ կը տանջես։

Քեզնից երբէք հեռացող չեմ,
Սիրել եմ քեզ, մոռացող չեմ,
Ահա սուրը, սիրտս խրէ,
Արիւնս քոյ ձեռով թափէ։

Ինձ նման հաստատ բարեկամ,
Չես ունենայ ոչ մի անգամ,
Ափսոս, սիրտս չես հասկանում,
Թողել ես տխուր ու տրտում։

Գոնէ խղճա՛ քանի վայրկեան,
Ինձ վերջնական տուր պատասխան,
Կամ ապրեցուր, կամ սպանէ,
Հոգիս քեզի ապաստան է։

Ես մի այգի տնկեցի,
Պտուղները չը կերայ,
Յոյսս դրի կորեկի,
Գարու արտերի վերայ,

Տաք խորշակը մի կողմից,
Զորացուց իմ արտերը,
Թրթուրն էլ միւս կողմից,
Նորոգեց իմ դարտերը։

Մուկն ու մորեխ իրար հետ,
Կերան ինչ որ ունէի,
Իմ բերքերից չը թողին,
Մի բուռը տուն տանէի։

Լայնատարած աշխարհում,
Բաղդս երբէք չը բանեց,
Ճակատագիրն էլ կասես,
Մի կողմից ոտնահարեց։

Բիւրաւոր ցաւ սրտիս մէջ,
Տեղ գտան ու կրծեցին,
Իրանց սուր սլաքներով,
Հազար տեղից խայթեցին։

Բաղդս ծովի յատակում,
Գնաց ու անհետ կորաւ,
Յոյսս խանձարուրի մէջ,
Թառամեց ու չորացաւ։

Որդիքս, աղջիկներս,
Մնացին մերկ ու քաղցած,
Նրանց հոգսը դու քաշէ,
Ով Տէր Աստուած ողորմած։

Երբ մօրիցս ծնուեցի,
Աշխարհ եկայ ու լացի,
Երկու փոքրիկ բազուկով,
Ունայնութիւն գրկեցի։

Ունայնութիւնն աշխարհի,
Ես այն օրից զգացի,
Երբ մօրս տնուշ կաթը,
Լաց ու կոծով ծըծեցի։

Երբ մեծացայ դարձայ մարդ,
Կեանքս ուրախ էր զուարթ,
Սակայն ունայն աշխարհը,
Ինձի պատրաստեց թակարթ։

Անհոգ օրերս անցան,
Վշտեր վերաս ծանրացան,
Ինձի սիրող սրտերը,
Քարի նման կարծրացան,

ՀԱՆԵԼՈՒԿ 1)

Որբ մայր եմ մեծ հասակով,
Որդիք ունիմ բազմաթիւ,
Տարփածուներս շատ են,
Չկայ նրանց թիւ—հաշիւ.
Որդիքս կուլան—կողբան,
Թոռներս ուրախ կը խնդան: } 2

Երկար տարիներ այրի,
Սևեր հագած նստած եմ,
Որբուկներիս խնամքով,
Տիրած ու պահպանած եմ:

Աչքերիս արտասունքը,
Հոսում է իբրև գետակ,
Սև բազդը ինձ արել է,
Ուրիշին ծաղը ու ծանակ:

Այրիացած օրից,
Աչքերս քուն չի մտել,
Զօր գիշեր մտածելով,
Մխիթարանք չեմ գտել,

1) Դիր 12.—Վանկ 6.— Հաշիւ 7416:

2) Այս տողերը ամեն տան վերջում պէտք է կրկնել:

Իմ անխոնջ ծառաներս,
Գլուխ առան ու կորան,
Նախիրներս—հօտերս,
Մնացել են անպաշտպան:

Որդիքս ծերացել են,
Թոռներս են փոքրահասակ,
Յոյսս միայն Աստուած է,
Նա պիտ ծագէ արեգակ:

Ժը պատել է սարերը,
Ծածկել է քոլեր, քարերը,
Ախչի, քոյ թուխ աչքերի պէս,
Սևացել է իմ օրերը:

Ամպը ծովից ջուր է ծըծում,
Բարձր հասակդ սիրտս կծում,
Չէ որ ես քոյ սիրած եարն եմ,
Է՞ր ինձ վերայ չես կսկծում:

Արփաչայը վարարել է,
Ծաղկոցս քանդել տարել է,
Նախանձ մարդիք ինչ են ասել,
Որ սէրդ ինձնից սառել է:

Մայիսին անձրև կը ցողա,
Ցուկը ջրի մէջ կը լողայ,
Քանի չինար բոյրդ տեսնեմ,
Ձռներս տակս կը դողայ։

Փշոտ են վարդի ծառները,
Ծակոտում են իմ ձեռները.
Խելքս գլխիցս առան տարան,
Էդ մարմառ դոշիդ նռները։

Լաւ չեմ տեսել իմ հաշիւը,
Ձախ դառաւ բաղդիս անիւը,
Քոյ աննման սիրոյդ համար,
Ձեռքից թռաւ իմ պատիւը։

Անուշ հոտ կը բուրէ դաշտից,
Մի կտոր հաց տուր ձեր տաշտից,
Ե՞րբ կը լինի անգութ մորդ,
Կարմիր քամին բռնէ կշտից։

Սարը կանանչ, դաշտը ծաղիկ,
Դու կը նմանես ձնծաղիկ,
Կապոյտ մանիշակ աչքերդ,
Ինձ կեանք են տալիս, անուշիկ։

Ես Սասնիկն եմ ճարս կտրած,
Աշխարհի մէջը մոլորուած,
Վայիս մարդ, տունդ քանդուի,
Ո՞ւր թողիր ինձ եարից զլկուած։

Այն ինչ ժամ էր և ինչ վայրկեան,
Որ ներս մտար իմ ննջարան,
Կարօտակէզ քեզ գգուեցի,
Ընկեղծ սիրով համբուրեցի։

Մի՞թէ մոռացար այն օրը,
Որ ինձ թողիր, գտար նորը,
Նա կեղծում է, քեզ չի սիրում,
Իզուր ես նորան հաւատում։

Ո՞ւր ես ատում քոյ սիրածին—
Ինձպէս անմեղ արարածին,
Սպասումեմ ամեն վայրկեան,
Որ խղճի գաս, իմ սիրական։

Ես ափսոս եմ ու շատ ափսոս,
Ինձ մի գցիր դու փոսէփոս.
Թէ մի անգամ ձեռքից թռայ,
Միշտ պիտ անես, ա՜խ, ես վառայ։

Մի թողնիր ինձ իբրև տատրակ,
Անմխիթար ու միայնակ,
Ասա՛, որ ես քեզ ատումեմ,
Կամ թէ իսկ սրտով սիրումեմ։

Ձեռք տուր ինձի ընկեր ջան,
Ձանս քոյ ջանին ղուրբան,
Ինձ հետ խօսքդ մէկ արա,
Որ միշտ մնանք անբաժան։
Թէ ինձ մոռանաս,
Աչքով քոռանաս,
Թէ խօսքդ պահես,
Բարով զօրանաս։ 1

Ձեռք ձեռքի տանք, իմ ընկեր,
Լինինք անձրև բարեբեր,
Ցօղենք դաշտերի վերայ,
Ուրախանան շատ սրտեր։

Միասին գործենք ուրախ,
Լինինք անկեղծ—անխարդախ,
Ընտանեացս հաց ճարենք,
Նրանց անենք բերկրուրախ։

Դէ, վեր կաց գնանք բանի,
Լինինք մենք մարդ պիտանի,
Այնպիսի գործ կատարենք,
Որ ամեն մարդ հաւանի։

1) Այս տողերը պէտք է կրկնել ամեն տան վերջում։

Իմ լոյս, իմ արեգ, իմ սէր և իմ կեանք,
Իմ ոյժ և իմ յոյս դու ես միայնակ.
Իմ փառք, իմ պարծանք, սփոփանք սրտիս,
Քեզ եմ ճանաչել, անուշ նազելիս։

Դու լաց մի՛ լինիր, հեզութեան մայրիկ,
Կտայ երկինք մեզ ժամեր երջանիկ,
Կը չքանայ շուտ սրտիդ հառաչանք,
Կստանաս նորից, նոր յոյս ու նոր կեանք։

Ամբիծ սէրդ չի թառամիլ երբէք,
Կը փայլի մի օր մեր գլխին արեգ,
Կը դողայ յայնժամ դաւաճան աշխարհ,
Ով որ եղել է մատնիչ մեզ համար։

Մեծայոյս եղիր, լայնասիրտ դու միշտ,
Երբէք չի մնալ սրտումդ մի վիշտ,
Պէտքէ մեզ կապել յայն սիրոյ շղթան,
Որ չի արձակուիլ մինչև յաւիտեան։

Ինձ համար չկայ կեանք, չկայ փառք հիմայ
Ա՜խ, ապրումեմ մոլոր—շուար ակամայ,
Կորուցել եմ կայք ու կալուածքս բոլոր,
Մնացել մի տրտում—տխուր սգաւոր։

Ո՞ւր այն արփին, որ փայլում էր իմ գլխին,
Ո՞ւր այն աստղը, որ շողում էր երկնային,
Ո՞ւր այն սիրտը, որ ինձ սէր էր խոստանում,
Ո՞ւր այն հոգին, որ կը խաղար իմ սրտում։

Հիմայ ո՞ւր է այն ծաղիկը պարտիզիս,
Որ բացվում էր, լոյս էր տալիս աչերիս,
Ո՞ւր կը երգէ այժմ սոխակս գեղեցիկ,
Եւ ո՞ւր արդեօք բացվում է իմ վարդ ծաղիկ։

Ինչո՞ւ կորաւ պատկերը չքնաղ կուսին,
Որ ամեն ժամ սփոփանք էր իմ սրտին,
Ինչո՞ւ թռաւ հրեշտակն իմ փրկութեան,
Ու ինձանից հեռացաւ նա յաւիտեան։

Գիշերներս անքուն կանցնի,
Բաց աչք՝ երազ տեսնելով,
Այլ չունիմ ինձ հանգստութիւն,
Անկողնիս հետ կռուելով։

Բաղդն ինձանից խռովել է,
Ձէնք ու զրահ վեր առած,
Պատերազմում է կեանքիս դէմ,
Սաստիկ յուզուած—կատաղած։

Այլ ևս ինձ օգնող չունիմ.
Մենակ մնաց իմ գլուխ,
Կը տանջուիմ—կը տապալիմ,
Պատել է ինձ մառախուղ։

Որքան օգնութիւն եմ կանչում,
Ձեռ լսում արդարադատ,
Ընկղմուել եմ հրոյ ծովում,
Այրվումեմ անընդհատ։

Մի՞թէ միայն ես եմ ծնուել,
Այս աշխարհում տարագիր,
Թէ տանջանքը ինձ են բաժնել,
Որ սիրտս չի դադարիր։

Գարեգետի կամուրջիցը անցնէի,
Տաճկաստանի ճանապարհը ընկնէի,
Սիրուն եարիս լոյս երեսը տեսնէի . . .
Արի՛, արի՛, ո՞ւր գնացիր— }
Սիրտս ու թոքս կարատեցիր } 1

Կարօտալի նա ինձ թողեց հեռացաւ,
Մաշուած սիրտս բիւր ցաւերով լցուեցաւ,
Մէջ գիշերին վառ ճրագս մարեցաւ . . .

1) Այս տողերը պէտք է կրկնել ամեն տան վերջում։

Կարօտալի աչքերս արցունքով լցուած,
Ամեն վայրկեան փնտռումեմ եարըս սիրած,
Ա՜խ, մեռնէի—չը տեսնէի բաժանուած . . .

Այս գիշեր երազում ես քեզի տեսայ,
Կարծես թէ դրախտում թռչնի հետ խօսայ,
Արդեօք ինչու նպատակիս չը հասայ . . . .
Այրում է կրակդ ինձ թիթեռի պէս,—
Աչերս արտասունք, արիւն է հոսում սրտէս, } 1
Լալիս եմ քո ձեռից, որքա՛ն անխիղճ ես։

Կրակ եղար դու ինձ համար, որ այրե՛ս,
Հասկանումեմ որ դու ինձ սիրահար ես,
Մինչև երբ սրտիս մէջ նիզակներ շարես...

Գիշեր ցերեկ սոխակի պէս երգելով,
Սիրոյդ համար աղի արտասունք թափելով,
Մնացել եմ ոլոր—մոլոր շրջելով . . . .

Գեղեցիկ ես, դու գեղեցիկ առաւել,
Բայց ափսոս որ, դեռ անփորձ ես ու ջահել,
Դեռ չը գիտես սիրահարիդ գրաւել . . .

1) Այս տողերը պէտք է կրկնել ամեն տան վերջում։

Ինչու՞ այդպէս անխղճաբար,
Որսացիր ինձ, անգութ որսորդ,
Կիսամեռ թողիր հեռացար,
Այրեցիր սիրտս, անգութ որսորդ։

Գոնէ նետդ այնպէս ուղղէիր,
Որ չանէր ինձ կիսակենդան,
Ուղիղ կրծքիս մէջ ցցէիր։
Թող դնէին սև գերեզման։

Անբոյժ վէրքս ինձ տանջում է,
Ծնողքս էլ ինձ մօտ չեն գալիս,
Բարեկամս էլ հեռանում է,
Ինձի վիրաւոր տեսնելիս։

Արդեօք ինչքա՛ն պէտք է մնամ,
Կսկծալով ու ողբալով,
Չիտեմ ինչպէս նզովք կարդամ,
Ընդողոմ արտասուելով։

Ես մի թռչնիկ ունէի,
Երգում էր քաղցր ու անոյշ,
Ոսկէ վանդակի միջին,
Պահում էի միշտ զգոյշ։

Մխիթարանք իմ սրտին,
Թռչնիկս էր միշտ աննման,
Իմ բաղդից չար կատուներ,
Նորան թշնամի դարձան։

Ընկաւ երկիւղ սրտիս մէջ,
Ոչ խօսում էր, ոչ երգում,
Այն գեղեցիկ թռչնիկս,
Մնում էր լուռ ու տրտում։

Այդ չար, նախանձ կատուներ,
Մռռալով—մլաւելով,
Թողին անմեղ թռչնիկիս,
Այսպէս լալով—ողբալով։

Միշտ ազատ թռչկոտում էր,
Ձագերի հետ միասին,
Հիմայ իր ցաւը թողած,
Մտածում է իմ մասին։

Ամուրը սիրովդ ինձ գերեցիր վեհ տիկին,
Պէտք է սիրել քեզի, իմ հոգեակ անգին,
Խնդրենք երկնից համբերութիւն մեր սրտին,
Որ վայելենք փառք ու պատիւ յաւիտեան։

Հանգիստ եղիր, իմ աղաւնեակ, ամեն ժամ,
Կտայ մեզ Տէր հիւսած պսակ անթառամ,
Բաւէ ողբալ քեզ, իմ սիրոյ բարեկամ,
Ցուտ կը լինիս դու մատնանիշ սրբութեան։

Սիրոյ կրակ, սիրոյ բորբոք իմ սրտից,
Թող դուրս չգայ, կուզեմ մեռնել այս վէրքից,
Թող տանջուիմ—այրուիմ քոյ կրակից,
Կգայ մի օր հրեշտակքս փրկութեան։

Խղճա՛ ինձ վարդ, բացուիր, բաւէ տանջուել մեզ,
Նուիրումեմ մատաղ կեանքս ու հոգիս քեզ,
Զլնիս գոռոզ, կարեացդ չափ եղիր հեզ,
Որ չը գնանք աննպատակ գերեզման։

Պարտիզում վարդեր բացուած,
Կսպասեն սոխակի,
Առանց սոխակ թառամած,
Կարօտ են պսակի . . .
Արդեօք ո՞վ է, դուռն է թակում,
Ա՜խ, սիրտս կը դողայ,
Իմ սիրուհիս ո՞ւր է գնում,
Ա՜խ, սիրտս կը խաղայ։

1) Այս տողերը պէտք է կրկնել ամեն տան վերջում։

Գետակի ալիքները գնում են խայտալով,
Սիրահարի աչերից արտասուք թափելով,
Սիրուհին տանը նստած սպասում է եարին,
Քնարը ձեռին բռնած նուագում լալագին։

Թիթեռը ճրագի մոտ շրջում է անդադար,
Մինչ իր վերջ սիրակարոտ չունի նա օր դադար,
Սիրուհին տանը նստած կազմում է նամակներ,
Խիստ տրտում կանցկացնէ իր գեղեցիկ օրեր։



Թէ գնացի, դու մի սգար,
Իմացիր որ զոհուեցի,—
Անկեղծ սիրոյս լիշատակին—
Յաւիտեան անդառնալի։

Թէ և ծանր լինի այդ վիշտ,
Հոգոյս հատոր սիրելիս,
Բայց համբերէ, մի վհատիր,
Տիրոջ կամքն է, իմ հոգիս։

Գուցէ արևս նոր պիտ ծագէ,
Խոստանալով մեզ նոր կեանք,
Գուցէ բաղդս նոր պիտ ժպտայ,
Տեսնելով մեր այս տանջանք։

Արդեօք ո՞ւր ես իմ նազելի,
Եւ ո՞ւրտեղ ես դու քնած,
Որ չես լսում աղաղակս,
Թողել ես ինձ շուարած։

Ո՞ւր ես, երազով ինձ ցոյց տուր,
Արթնացնեմ երգերով,
Տեսնես թէ, որքան եմ տանջվում,
Քոյ սուրբ սիրոյ վերքերով։

Զարթիր, զարթիր, իմ նազելի,
Է՞ր ննջես անուշ քնով,
Քիչ էլ հանգիստ խղճալոյս տուր,
Ես էլ հանգչիմ քոյ գրկով։

Այս աշխարհում բացի քեզնից,
Ոչինչ չունիմ սփոփանք,
Միայն դո՛ւ ես, դո՛ւ, ինձ համար,
Թէ մահ տուող և թէ կեանք։

Կարմիր այտերդ գոյն են տալիս վարդերին,
Քաղցր լեզուդ, դայլայլիկ սոխակներին,
Շրթունքներդ ինչպէս նռան ծաղիկներ,
Նաշխուն աչերդ, կարծես, երկնային լապտեր։

Արեգակի երկու շանթեր աչերդ,
Ինձ խփեցին, վշտահար եմ քո ձեռդ,
Իսկ մեռած եմ, ոչ կենդանի աշխարհում,
Մենակ նստած, միշտ քեզ համար եմ ողբում։

Երբ մահանամ ես գերեզմանիս մոտը,
Կարդա տասանագիրս, սիրոյդ կարոտը,
Այն ժամանակ կլնի հոգիս երջանիկ,
Եւ դրախտում արևս կը փայլէ մեղմիկ։

Ցուրտ դիակս սառ հողի տակ կը մնայ,
Բայց թէ հոգիս, քեզ երբէք չի մոռանայ.
Թէ և գնում ու թողնում եմ քեզ միայն,
Հրեշտակներ քեզ կը լինին պահապան։

Տուր ինձ պատանդ մի համբոյր,
Աչերիցդ այդ տխուր,
Թող սրտիս մէջ վառ մնայ,
Ցիշատակ— ինչպէս մի հուր։

Խնդրումեմ մի ճար արա ինձ,
Քոյ սիրովդ սուրբ ամբիծ,
Եթէ գտնես մի նոր ելք,
Ինձ կազատես իմ մահից։

Զը խաբուիս գեղեցկութեան,
Ուսման ու հարստութեան,
Ում որ սիրել ես անկեղծ,
Կաց նրա հետ յաւիտեան։

Երբ որ արևն ամպի տակից,
Դուրս է գալիս շողալով,
Իմ նազելու աչերի դէմ,
Կանգնումէ դողդողալով։

Խոնարհանում է լուսինը,
Նրա ճակատը տեսնելիս.
Իր նուրբ արծաթափայլ գոյնը,
Խաւարում է նայելիս։

Թուխ ունքերը գեղանկար,
Շանթող նիզակների պէս,
Ի՞նչ խոր խփեց, մինչ իմ վազճան,
Դուրս պիտ չգան իմ սրտէս։

Հայ հովիւը կանգնած իր հօտից հեռու,
Ամայի դաշտի մէջ, մի ժայռի գլխու,
Նուագում էր քաղցր իր եղանակով,
Այրվում էր ու խորվում եարի կրակով։

Նայում էր աջ ու ձախ նա միշտ անհամբեր,
Գուցէ թէ վերևից անցնեն թռչուններ,
Միշտ լուր էր սպասում իր սուրբ աշխարհից,
Եւ իր սիրած անկեղծ եարի բերանից։

Մի օր կռունկները իրանց երամով,
Հովուի երկրից գալիս էին երգելով,
Երամապետն իսկոյն խմբից բաժանուեց,
Խղճուկ հովուին, ա՛յ թէ լուրեր հաղորդեց։

Ասաց.—«տարան քո նազելի վարդ եարին,
Քիւրդերը անօրէն իրանց հարս արին,...
Այդ գուժաբեր անմեղ թռչունն հեռացաւ,
Կարծես երկինքն հովուի գլխին սևացաւ։

«Վա՛յ իմ գլխին, ասաց ու ընկաւ ժայռից,
Այս ի՞նչ վատ լուր ստացայ անուշ վարդից»,
Սրտից արիւն, աչքից արտասուքները . . .
Ընկած ժայռի տակին, խոր էր վէրքերը։

Ոչխարները նրա մօտ հաւաքուեցան,
Գոռում-գոչում էին «ո՛վ մեր պահապան,
Քեզ նման պահապան մենք որ էլ չունինք,
Հիմայ այս դալլերից, ո՞ւր ապաստանինք„։

Նա չէր կարող պատասխանել իր հօտին,
Միայն նուազ ձայնով կանչում էր եարին,
„Վա՛րդ, վա՛րդ, ո՞ւր ես, մեռանումեմ ես ահա,
Քոյ դարտով գնացի, Աստուած է վկայ»։

Վա՛րդ, ինչո՞ւ չես խղճում ինձ,
Սիրտս լցիր վիշտ—թախիծ,
Ինչո՞ւ չես ուզում բացուել,
Երբ քեզ հոգւով եմ սիրել։

Վայրկենական չը կարծես,
Մինչ վերջ պիտի սիրեմ քեզ,
Բացուիր, բուրէ անուշ հոտ,
Թող լիանայ իմ կարօտ։

Արի, անուշ նազելի,
Թոյլ տուր տերևդ բացուի,
Գէթ մի անգամ կը տեսնեմ,
Յայնժամ հոգ չէ, թող մեռնեմ։

Ո՞ւմ պատմեմ իմ խոր վէրքեր,
Որ չը տխրին այն սրտեր,
Երբ բացուի իմ նազելին,
Թող մեռնեմ թփի տակին։

Դալլալիկը սոխակի,
Թող քեզ համար միշտ երգի,
Ցանջվում է միշտ սոխակը,
Բայց քեզ համար է ջանքը։

Ինչքա՛ն երգեմ, ինչքա՛ն լամ,
Վարդ, չես մնայ անթառամ,
Պէտքէ մի օր թառամիս,
Բայց ինձ կարօտ կը թողնիս։

Հարաւից մի զեփիւռ գար,
Այրած սիրտս հովանար,
Վարդ, ինչո՞ւ ինձ չես խղճում,
Եւ սոխակիս խորովում։

Ում սիրեցի, նա ինձ ատեց,
Ում ատեցի, նա ինձ սիրեց,
Սիրելոյս տենչանքն ինձ այրեց...
Ատելիս ինձ ատէ, հոգ չէ,
Իսկ սիրուհիս թող ինձ տանջէ։

Թէ անիծեմ կը պատժուի,
Եթէ օրհնեմ, ինձ կը տանջի,
Երանի լինէր մի նոճի...
Փաթաթուէի արմատովը,
Չը տանջուէի կարօտովը։

Երանի եմ տալիս նրան,
Ով չէ ունեցել սիրական,
Սիրայրած սրտերը թող լան ..
Որ չունին օր հանգիստ խաղաղ,
Կեանք ու հոգի կտան մատաղ։

☆ ☆ ☆

Քանի աստղերը շողշողան,
Կրակոտ աչերդ եմ յիշում,
Քանի ամպերը գոռգոռան,
Ախ ու հառանչանքդ եմ յիշում։

Երբ լուսինը շրջափակուի,
Տխուր դէմքդ եմ մտաբերում,
Քանի անձրևը կաթկաթի,
Անկեղծ արտասուքդ եմ յիշում։

Մայիս ամսի առաւօտը,
Թէ պարզ լինի արևազարդ,
Թէ ներշնչէ մաքուր օդը,
Քո մեղմիկ շունչդ եմ համարում։

Հոգւոյս հատոր, ո՞րը մոռնամ,
Ո՞րը յիշեմ, ես չը գիտեմ,
Ամեն բոպէ, ամեն վայրկեան,
Մենակ սուրբ սէրդ եմ յիշում։

«Լուսնեակը ցոլաց գնաց,
Անցաւ ամպի տակ մնաց»,
Ամեն մարդ սիրածն առաւ։
Իմ եարս բաժան մնաց։

Լուսնեակն է ամպի տակին,
Լոյս չի տար մանիշակին,
Քանի—քանի տարիներ,
Վառուիմ ես քո կրակին։

Լուսնեակի լոյսն անցկացաւ,
Առաւօտը բացուեցաւ,
Բացի ինձնից ամեն մարդ,
Իրան մուրազին հասաւ։

Դուրս եկաւ արեգակը,
Աշխարհ բռնեց փայլակը,
Մինչ երբ վանդակում մնայ,
Իմ քաղցրախօս թութակը։

Քարվի գլխին ունիմ տուն,
Տանս միջին երկու սուն,
Դարտս էնքան շատ է որ,
Գիշերները չունիմ քուն։

Եարալի—եարալի սիրտ,
Ո՞ւր է իմ մարալի սիրտ.
Շուտ մուրազիդ կը հասնիս,
Մի լար, իմ փարալի սիրտ։

Տանս տակից ջուր բխար,
Եարա սիրտս լուանար,
Եարիս տուած վէրքերը,
Իրան ձեռքով լաւանար։

Բաղչա ունիմ ծառներով,
Մէջը լիքն է գառներով,
Գառները մատաղ անէի,
Անուշ եարիս ձեռներով։

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻԻՂԱԲԻԸ
ՊԵՐՈՒԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
ՀՈՒՆՈՒՐԻ 1929 ԹՎԻՆ

Առաւօտը բացուել ա,
Ղուշն անուշ կը ճլվլայ,
Ինչ քարասիրտ, մարդ պիտի,
Որ ինձ տեսնի ու չը լայ։

Բաղ եմ քցել նոր ինոր,
Հասցրել եմ մի խնձոր,
Եարիս տեսնելու համար,
Քանի ընկնիմ սար ու ձոր։

Եարօտովդ ինձ տանջում ես անդադար,
Աւաղ, իզուր եղայ ես քեզ սիրահար,
Բոլորովին հոգ չես անում ինձ համար...

Պարտիզում վարդեր,
Կերգեն սոխակներ,
Կասեն ինձ բոլոր,
Սիրուհիդ է նոր։ } 1

Տարել ես ինձանից իմ ուշ ու միտս,
Կը վախենամ շուտ թառամի ծաղիկս,
Մոռացել եմ ամեն չար ու բարիքս . . .

Խելացնոր ման եմ գալիս միայնակ,
Սիրուհիս ասելով՝ ամեն ժամանակ,
Սրտիս մէջ գցել ես մի անշէջ կրակ . . .

Այս տողերը ամեն տան վերջում պէտք է կրկնել։

Մի բոպէ հանգիստ չեմ տեսնում ինձի,
Սիրահար չեմ, ոչ կայքերի, ոչ գանձի,
Կուզեմ սիրոյս սոխակն անգամ նախանձի...

Ափսոսում եմ քեզի, որ ինձ չես հասնում,
Սիրոյդ համար միշտ արտասուք եմ թափում,
Մի վայրկեան մոռանալ քեզ, մեղք եմ համարում...

Ճանապարհս ընկաւ Տփխիս,
Կրակ լցուաւ մէջն իմ սրտիս,
Բարև արա սիրականիս . . . .
Երկրորդ խումբ, երրորդ խումբ,
Չորրորդ խումբ կռունկ,
Ո՞րտից ես գալիս գեղեցիկ կռունկ,
Որսորդի ձեռից վիրաւոր կռունկ։ } 1

Լալով գնում եմ ճանապարհ,
Նա իւր տանն է, ես եմ օտար,
Ասա՛ չընարէ նոր սիրահար . . .

Այն օրը որ ես չը տեսնեմ,
Իսկապէս կը խելագարուեմ,
Ես նրանից ինչպէս զատուեմ . . .

1) Այս տողերը պէտք է կրկնել ամեն տան վերջում։

Մատաղ լինիմ քո երամիդ,
Անուշ կռկռան բերանիդ,
Մի մոռանար սիրականիդ . . .

Ես մի պարտիզում տեսայ մէկ փնջիկ,
Հիւսուած էր գոյն—գոյն, հոտն էր անուշիկ,
Վեր առայ ձեռքս ու հոտ անելով—
Ման էի գալիս, ազատ—ապահով։

Երբ յանկարծ հայեացքս մի կողմ ուղղեցի,
Տեսայ մի ծեր մարդ ու սարսափեցի,
Իսկոյն փնջիկը ձեռքիս վայր ընկաւ,
Այդ կախարդ ծերը եկաւ վեր առաւ։

Ասաց.—„ ա՛յ տղայ, ո՞նց յանդգնեցար,
Մտար պարտէզը փունջս վեր առար,
Մի թէ կարծում ես պարտէզն անտէր է,
Արի դուրս կորիր, գլխիդ խելք ճարէ։

Ո՞վ է քեզ համար այդ փնջիկն հիւսել,
Որ այդպէս կուզես ազատ հոտոտել,
Մինչև որ արիւն քրտինք չը թափես,
Ո՞վ կը թողնի քեզ հանգիստ հաց ուտես։

Այս պարտէզի մէջ ես եմ աշխատել,
Իմ աշխատանքով ամենն պատրաստել,
Այս ծաղիկները ինձ են պատկանում,
Ես իմ ձեռքերով փնջեր եմ հիւսում։

Իմ որդոց համար այս օրն եմ հասել,
Նրանց համար ես կանք չեմ խնայել,
Հացս էլ է նրանց, ջուրս էլ, իմ կեանքս էլ.
Երջանիկ ապրել նոցա է վայել։

„Ուրեմըն հիմա մենք որ հայր չունինք,
Պէտքէ որ գնանք քարերէ՞ցն ընկնինք„.
Իհարկէ գցելու է ձեզ միշտ քարերից,
Երբ որբ էք մնացել քանի դարերից։

Օտար պարտիզպան խօմ պարտական չէ՞,
Որ ձեզի համար պարտէզ մշակէ,
Որքա՞ն տանջանքով ժայռերի միջից,
Ջուր եմ դուրս բերել ապառաժ քարից։

Երկար ու բարակ ժամանակ չունիմ,
Քեզ պէս անմտին ամեն բան խօսիմ,
Աշխատիր որ լաւ միջոց ձեռք բերես,
Յայնժամ երջանիկ կեանք կը վայելես։

Երբեմն հոգիս վրդովում է,
Խղճուկ մարմնիս տանջելու,
Կամ ինձանից հեռանում է,
Օտար աշխարհ շրջելու։

Մի տենչանքով այրվում է նա,
Ձեմ հասկանում, ինչ բանից,
Չի հաշտվում նա, հեռանում է,
Զանձրացել է ինձանից։

Անմիտ ծնողն է իւր որդուն դաւաճան,
Իւր ձեռքովը կը պատրաստէ գերեզման,
Քեզ շատ էլ գութ, շատ էլ սիրել զաւակին,
Բայց որ անմիտ—թշնամի է իւր ձագին,

Որդին ասում է—«մայրիկ ջան ինձ լսիր,
Քո խեղճ որդուն իզուր դու մի՛ վնասիր,
Դու քո ձեռովդ կարում ես ինձ պատան,
Որ թշնամիք բերկրին և ուրախանան։

Նա իր կարգ ու կանոնները լաւ գիտէր,
Թէկուզ երկնից Աստուած էլ որ իջանէր,
Տանջվում էր այդ տանջանքովը պատանին,
Բայց չը հասաւ խղճուկն իւր նպատակին։

Ինքն իւր որդուն, իր ձեռքովը սպանեց,
Խեղճ պատանին սառ հողի տակը պարկեց,
Յետոյ տուեց իր գլխին ու արևին,
Բայց շատ ուշ էր, էլ չը գտաւ իւր որդին։

Ա՜խ, իմ քնար, դու ինչո՞ւ,
Դադրեցար ու լռեցիր,
Գուցէ սոխակի ձայնը,
Իմացար—ընդհատեցիր։

Թէ քեզ նորա քաղցր ձայնն,
Դերեց, թովեց, գրաւեց,
Եւ իւր երգի հնչիւնով,
Մի դաշոյն կուրծքիդ խփեց։

Քո լարերի հնչիւնը,
Մեղմ դայլայլիկ սոխակիս,
Գուցէ անձրևները ցողէ,
Իմ ուռնեցած կրակիս։

Հնչիր, հնչիր, իմ քնար,
Թող լսէ քո աղաղակ,
Գուցէ քեզանով միայն,
Հրապուրեմ, իմ սոխակ։

Թող մենք մութ—մութ ամպեր լինինք,
Ու գոռալով բարձրանանք,
Կարկուտ թափենք այն երկրում,
Ուր կսպառնան մեզ վտանգ։

Կրակ, կայծակ, հրեղէն սուր,
Թող երկնքից շողշողան,
Մեր չարանենգ ոսոխներ,
Թող սարսափին ու դողան։

Այսօր տեսայ մի պարտիզում,
Մի հայ աղջիկ սէր էր բաժնում,
Ասի քիչ էլ ինձ փայ հանի,
Ասաւ սիրոյ չես արժանի։

Ով պատանի, դու չը գիտես,
Թէ քեզ էլ տամ, ինչ պիտ անես,
Ես կը հանեմ նրան բաժին,
Ով որ դառնայ տէր իմ անձին։

Քո ճակատից եմ նկատում,
Սիրուց ոչինչ չես հասկանում,
Բնութիւնից տրուած բան է,
Քեզ պէս անձը անարժան է։

Դու դեռ գնայ ուսանելու,
Սիրտդ ու հոգիդ լաւ կրթելու,
Ապա թէ յանդգնիր ասել—
«Ով հայ աղջիկ կընամ սիրել»։

Երկինքն է մութ, սրտիս մէջ խոր—խոր վէրքեր,
Ինչ տարաբաղդ եղայ, ո՛վ արարիչ Տէր,
Լացը թռչունի պէս՝ լուն է շինել կրծքումս,
Անբուժելի մնաց, ա՜խ իմ ցաւերս։

Երջանկութիւնն ձեռիցս թռաւ վերացաւ,
Երբոր սիրուհիս ինձանից հեռացաւ,
Արեգակս ծածկուեցաւ մառախուղով,
Դառն արտասուք աչերս թափում են լալով։

Մէկ կողմ տրտում, մէկ կողմ ուրախ երեսս,
Չիտեմ ինչու նմանեցնեմ օրերս,
Հիմա տեսայ, աւերուած է պարտէզն իմ,
Այլ ևս իմ խեղճ սոխակներս ո՞ւր տանիմ։

Թախծալի է սիրտս, երեսս անժպիտ,
Սուգ կանցնին օրերս, ա՜խ, օրերս միշտ,
Խոր խորհելով սահում են ժամ, րոպէներ,
Սև ու մութ կանցնին իմ ծաղիկ օրեր։

Շրջապատել են ինձ բուք ու մրրիկ,
Ա՜խ, ո՞ւր էք դուք իմ մանկութեան տարիք,
Իմ վէրքերս թո՛ղ փարատէ Արարիչ,
Որ նա է տէր, նաև բոլորին փրկիչ։

Ի գեղեցիկ պատահեցաւ ինձ յանկարծ,
Չը հասկացայ ինչ ցեղից էր նա ծնուած,
Անսուր մորթեց, առանց կրակ խորվեց ինձ,
Խաղաղ սիրտս ու հոգիս արաւ խոցալից։

Ոլոր—մոլոր մնացի,
Արիւն արտասունք թափեցի, } 1
Այնպէս հրեշտակ տեսայ,
Բայց աւա՜ղ շուտ զրկուեցայ։

Սուր—սուր նետեր սրտիս խփեց ու թռաւ,
Հէնց այն օրից լոյս արևս խաւարաւ,
Էլ ո՞ւր փնտռեմ, ո՞րտեղից գտնեմ նորան,
Որ իւր ձեռքով նա ինձ դնէ գերեզման։

Չը գիտեմ թէ, նա օդի՞ մէջ սլացաւ,
Թէ մի հրեշտակ էր, որ երկինք բարձրացաւ,
Գուցէ տեսայ երազիս մէջ ես նորան,
Որ խոստացաւ լինել սրտով սիրական։

Միշտ տխուր տրտում, տիրած լռութիւն,
Յուսահատ սրտիս, չի գալիս գարուն,
Ցերեկը խաւար գիշերի նման,
Սենեակս ինձ համար իբր գերեզման։

1) Այս տողերը պէտք է կրկնել ամեն տան վերջում։

Ինչո՞ւ դարտ ու ցաւ միշտ ինձ են գալիս,
Տխուր աչերս լալիս են լալիս,
Մի օր չես տեսնում արցունքն աչերիս,
Ցամաքի լացը, և ողբը սրտիս։

Երկիրն ինձ համար կարծես աւերակ,
Մարդկանց լեզուներն ինձ սուր ու նիզակ,
Խաբուսիկ աշխարհն ես ինչո՞ւ եկայ,
Որ ուրախութիւն ինձ համար չկայ։

Վրդովուած հոգւով, վհատուած սրտով,
Փնտռումեմ նրան ես անկեղծ սիրով,
Առանց նազելոյս ինձ համար չկայ, .
Ոչ երջանկութիւն, ոչ բաղդ ապագայ։

Այսօր տեսայ լոյս երեսդ։
Բուժուեց վերքեր—իմ վշտեր,
Համբուրեցի վառ աչերդ,
Նոր կակղացան իմ օրեր։

Երբ սենեակում մենք միասին,
Զոյգ նստեցանք հրճուանքով.
Աչերս երեսդ նայեցին,
Առատ արցունք ցողելով։

Ուրախութեան կաթիլները,
Մարգարտի պէս թափելիս,
Նորոգվում է միշտ իմ կեանքը,
Քաղցր խօսքդ լսելիս։

Մեզ վկայ է այս փայտաշէն—
Ոսկէլարեայ գործիքը,
Որ լալիս է իմ մատներէն,
Եւ լացացնում քոյ սիրտը։

Պարտք համարիր քո սրտի մէջ,
Որ միշտ յիշես այս օրեր,
Թող քնարը հնչէ անվերջ,
Ինչպէս տեսել է մեր սէր։

Օտարութեան մէջ ես կիսակենդան,
Ապրումեմ այսպէս, շուրջս է տխրալի,
Ինձ սփոփանք չունիմ մի վայրկեան,
Չկայ ինձ համար ոչինչ ցանկալի։

Նայումեմ շուրջս, օտար ծաղիկներ,
Ամեն կողմ բացուած, բայց ինձ անհոտ են,
Ա՜խ, երբ կտեսնեմ մեր երկրի վարդեր,
Որոնց աչքերս սաստիկ կարօտ են։

Չը գիտեմ յայնժամ ես իմ կարօտը,
Ի՞նչպէս պիտ յայտնեմ այն տերևներին,
Ի՞նչպէս արտասունքիս առատ շիթերը,
Պէտքէ ցողեմ ես թփերի տակին։

Որ վերադառնամ ես իմ հայրենիք,
Սիրտս մի նոր սէր պիտ զգայ իր մէջ,
Ինձ ուրախութիւն գալու է սաստիկ,
Էլ ինձ տխրութիւն չկայ մինչ իմ վերջ։

Դառն մահացու հրաժեշտ,
Ի՞նչ շուտ ազդեցիր մեր վերայ,
Բաժանեցիր երկու սիրտ հեշտ,
Ջնջեցիր մեր բաղդն ապագայ։

Էլ չեմ տեսնում այն գեղազարդ—
Շքեղափայլ հեզ նազելին,
Որին կարօտ են սոխակ, վարդ,
Եւ բիւր ծաղկունք կը խոնարհին։

Իմ լուսինը էլ չի փայլում,
Մռայլ ամպերի մէջ կորաւ,
Սիրոյ արեան երակներում,
Կարծես թոյներ խառնուեցաւ։

Այլ ևս ինձ գարուն չկայ,
Ոչ արեգակ և ոչ աստղեր,
Ա՜խ, թուխակս թռուցել եմ,
Թող խաւարին պայծառ օրեր։

Ասուհետև մինչ իմ վաղճան,
Պէտքէ գոռամ ու բողոքեմ,
Շիրիմիցս էլ, իմ դաւաճան,
Պէտքէ կրկին վրէժ խնդրեմ։

Գոկոն վարդերի նման,
Բացվում ես դու անպայման,
Քեզ համար շատ սոխակներ,
Գիշեր ցերեկ կը ողբան։

Արևի պէս փայլումես,
Մատաղ սրտեր այրումես,
Ով քեզ սրտով է սիրում,
Նրան էլ տոչորում ես։

Երկու աստղեր երկնային,
Ցոլում են քու ճակատին,
Աղեղ ունքերիդ տակին,
Շանթհարում են իմ սրտին,

Խնուս գեղի մէջ տեխը,
Խրամայեց մենծ շեխը,
Թորկեց, գիս լաց ու շիւան,
Եարսի տարաւ մենծ պեխը։
Տարան, տարան զիմ եարը,
Տարան զիմ մէկուճարը,
Հաւար էրէք Սարոյին,
Տարան խորոտ Վառոյին։ 1

Իմ եարն անմեղ ճնճղուկ է,
Եարա սրտիս գեղուկ է,
Մենծ պեխի սուր խանչալից,
Զիմ սիրտ ճեղուկ—ճեղուկ է։

Եարիս ծամերն էր օսկի,
Դակմայ չըր լիգայ խոսքի,
Զոռ հա զոռ փախցուց տարաւ,
Էն մենծ պեխը անխոգի։

Անուն Վառոյ էր եարիս,
Խոզ քաշեցի զիմ հալիս,
Էն մենծ պեխի կեռ թուրը,
Կտրեց թելեր իմ մէջքիս։

Մացի յետևէն լալով,
Գլխուս բրչամ պոկելով,
Էն օրէն մեռայ մացի,
Քար ու քռայ ընկնելով։

Այս տողերը ամեն տան վերջում պէտք է կրկնել։

Ազատ կեանքս շղթայել եմ իմ ձեռօք,
Մի սիրտ չկայ, որ լսէ իմ լաց—բողոք,
Բիւր ցաւերով լիացուցի թարմ կեանքս,
Ա՜խ, ինչ անեմ, չը կատարուեց բաղձանքս։

Շահ չունեցայ բոլորովին ես սիրուց,
Բացի լացից ու արտասունք թափելուց,
Միայն ինձ յիշատակ լաց ու կոծ—շիւան
Թողեց սրտիս մէջ իմ անգութ սիրական։

Սիրունները ինձ խաբել են,
Անխղճաբար կաշկանդել են,
Ազգային հոգիս հանել են.
Նոր եմ ես այն հոգին փնտռում,
Որը ազգիս էր պատկանում։

Սիրունները ինձ գերեցին,
Անուշ լեզուով գրաւեցին,
Խելքս ինձանից խլեցին.
Նոր եմ զգում որ ազգ ունեմ,
Պէտք է նրան ես որոնեմ։

Սիրունները միտքս տարան,
Ձեռ ու ոտս դրին կապան,
Ձեղայ խեղճ ազգիս պէտքական.
Պիտի գտնել մի նոր հնար,
Որ լինի ազգիս օգտակար։

Սիրուններին էի պաշտում,
Ամեն մի գործս մոռանում,
Սէրս նրանք էին տանում.
Էլ ինչ մնար ազգիս համար,
Որ անէի ես անդադար։

Սիրունն՝ը—սիրունն՝ը,
Նրանք էին գլխիս տէրը,
Հազիւ կգգամ ունայն սէրը.
Երանի ազգս փնտռէի,
Կեանքս նրան նուիրէի։

Հիմա նոր եմ զգում ես այն.
Աւաղ, շուտ կիջնեմ գերեզման,
Ես անանուն ու անարժան—
Պէտքէ պարկեմ սև հողի տակ,
Եւ յաւիտեան անյիշատակ։



Զար մարդիքը երգ չեն սիրում,
Սիրողին էլ անարգում են,
Իսկ ով բարի է աշխարհում,
Նոքա ամեն սէր լաւ գիտեն։

Երգիչը—անմեղ սոխակը,
Երգ սիրողը քնքուշ վարդը,
Զարերի նման ագռաւն է,
Նորան լեշ տուր, ինչ է վարդը։

Մենք շատ ունինք այսպէս մարդիք,
Պաշտում են փողն իբրև Աստուած,
Ո՜հ, ատելի այդ վատ հոգիք,
Հաւաքում են միշտ գանձ ու գանձ։

Հոգու կերակուրն է մարդուս—
Ջուրթակ, քնար, քաղցր նուագ,
Խղճուկ կոյրին, ինչ լապտեր—լոյս,
Երբ նա չի տեսնում արեգակ։

Մեր երկրի մէջ գեղարուեստը,
Ամենացած տեղն է բռնում,
Երգչի տեղն է դրան մօտը,
Տես թէ ինչ չափով են սիրում։

Այն խղճուկ ջուրթակահարը,
Այնպէս ձանձրացել էր կեանքից,
Կարծես շալկած լիներ սարը,
Գանգատվումէր խեղճն իր բաղդից։

Մի հարուստ տուն հարսանիք կար,
Ես էլ հանդիսացայ այնտեղ,
Բարի, թէ չար մարդկանց համար,
Սեղան բացուեց խիստ փառահեղ։

Լաւն ու վատը չեն հասկանում,
Կածէր խեղճ աշուղն անընդհատ,
Շատ ածողին են լաւ ասում,
Այս երկրում հարուստ թէ աղքատ։

Արտ ամսի տասն է, եկան կռունկները,
Ինձ չը բերին լուր, ախ, սիրտս է տխուր.
Ապրիլ ամիսն է, կանաչան դաշտեր,
Այդիս չոր մնաց, ախ սիրտս գնաց։

Մայիս ամսի մէջ ծառեր ծաղկեցան,
Վարդը չը բացուեց, վերքս չը բուժուեց,
Եկաւ Յունիսը, շատ մրգեր հասան.
Ինձ բաժին չկայ, ախ սիրտս կուլայ։

Յուլիսում բոլորն հնձեցին արտեր,
Դեռ ես ցանել չեմ, ինչ պիտի հնձեմ,
Օգոստոսի մէջ կարմիր խնձորներ,
Սև են ինձ համար, էր մնամ անճար։

Սեպտեմբեր հասանք, ժամն է խաղողի,
Պտուղք շատ համեղ, ցաւիս չեղան դեղ,
Ա՜խ, դու Հոկտեմբեր, եկաւ նոր գինին,
Խմեցի համով, ինձ լցրեց ցաւով։

Յոյսս քեզ մնաց Նոյեմբեր ամիս,
Գոնէ բաց մի դուռ, մի նայիր ինձ ծուռ,
Է՜հ, դու Դեկտեմբեր, դու էլ զուր կանցնիս,
Ոչ այդիս ծաղկաւ, ոչ վարդս բացուաւ։



Սիրած եարս ինձանից արին,
Թող երթայ կորի այս չոր տարին,
Գլխէս կտրեց ամեն բարին.
Օրերս մոլորուած կանցնի,
Տրտում ու տոչորուած կանցնի։ } 1

Աստուած անէ դատաստանը,
Ով որ տարաւ իմ սէր սիրականը,
Անյայտ մնայ գերեզմանը...

Քանի տարիներ սիրեցի,
Աւաղ, ջանքերս իզուր կորուցի,
Բաղդս ձեռիցս թռուցի...

Խոստացել էր նա ինձ սիրել,
Մինչև իւր կեանքի վերջ չբաժանուել,
Շատ սիրելու վերջն է ատել...

1) Այս տողերը պէտք է կրկնել ամեն տան վերջում։

Այն մոլորակ աստղի նման,
Ա՜խ, չը գիտեմ, թէ որ կողմը գնամ,
Որ գէթ մի քիչ հանգստանամ...

Ազատ արա վանդակից,
Թռնիմ զատուիմ քեզանից,
Երբ այլևս չես սիրում,
Խնդրեմ տաս ինձ դադարում։

Շուրջս ծաղիկներ շատ կան,
Շուշան, մեխակ, բալասան,
Ոչ մէկը չեն քեզ նման,
Դու իմ հոգեակ սիրական։

Նայիր մէկ ինձ անուշ վարդ,
Չը ճանաչես ինձ կախարդ,
Քո սոխակն եմ սիրահար,
Բա՛ւ է տանջես չարաչար։

Մի նոր հնար մտածիր,
Ինձանից մի՛ բաժանուիր,
Գէթ ամիսը մի անգամ,
Ինձ մի համբոյր ընծայիր։

Խելահաս ես այժմ դու,
Խրատ չունիմ քեզ տալու,
Թէ ատում ես ինձ հաստատ,
Էլ ի՞նչ ունիմ մօտ գալու։

Է՞ր քեզ համար մտածեմ,
Ինչ որ կամիս կատարեմ,
Կեանքս էլ կուզես քեզ կտամ,
Գոնէ լոկ քեզ հետ խօսեմ։

Նազելիդ իմ գեղանի,
Դիցուհի ես անուանի,
Վերջին խնդիրս է ահա,
Կամ սիրիր, կամ սպանի։

Սիրելուցս չեկաւ նամակ,
Տխուր եմ, չ՚լամ, ի՞նչ անեմ,
Մնացել եմ ասա միայնակ....
Տխուր եմ, չ՚լամ ի՞նչ անեմ,
Իմ դարտերս ես ու՞մ պատմեմ։

Նորան թողի հեռու աշխարհ,
Լոյս օրերս կանցնին խաւար,
Նա էլ է տանջվում չարաչար...
Տխուր եմ չ՚լամ, ի՞նչ անեմ,
Իմ դարտերս ես ու՞մ պատմեմ։

Թէ և սիրաս իւր մօտ թողի,
Բայց մարմնոյս աչքը չի տեսնի,
Նորան ոչ ոք չի նմանի...
Տխուր եմ, չ'լամ ինչ անեմ,
Իմ դարտերս ես ո՞ւմ պատմեմ։

Դեղուհի է նա իսկապէս,
Սէրը դուրս չի գալիս սրտէս,
Հայի աղջիկ է պարզերես...
Տխուր եմ, չ'լամ, ինչ անեմ,
Իմ դարտերս ես ո՞ւմ պատմեմ։

Մեղմիկ զեփիւռ, լուր հաղորդիր,
Այրուած սիրտս զովացուր,
Աւերակաց շունչ փչիր,
Մեռեալ սրդոցս կեանք տուր։

Լեր սփոփանք արտմեալ հոգոյս,
Փափկացուր հողիս հարազատ,
Նոր կեանք տուր իմ թախծեալ մարմնոյս,
Եւ պարգևէ ինձ շունչ ազատ։

Սրբէ քրտինքը ճակատիս,
Քանի դարուց մնացած,
Սրբէ արտասունքն աչերիս,
Ուղղէ մէջքս կռացած։

Ես մի հսկայ արծիւ էի,
Սիրուն ձագեր ունէի,
Ձագուկներս օձը խեղդեց,
Բունս էլ հիմքից կործանեց։
Մնացել եմ հերարձակ,
Այրվումեմ արևի տակ,
Գլխիս թափել ես կրակ—
Անխղճաբար, անգութ աշխարհ,
Ձկայ քոյ մէջ մի դատ արդար։ [1]

Վեցհարիւրամեայ հասակիս,
Նոր—նոր կսկիծ իմ սրտիս—
Թողել է այդ անգութը միշտ,
Քանի՞ կսկիծ, քանի՞ վիշտ։

Քանի որ դեռ ջահիլ էի,
Ես անկարօտ կապրէի,
Շրջապատուած ժառանգներով,
Կապրէի շատ մեծ փառքով։

Երբ ծերացայ, ուժս պակսեց,
Սիրելիս էլ ինձ ատեց,
Հիմա խնդրումեմ օգնութիւն,
Եւ խղճալոյս փրկութիւն։

---

1) Այս տողերը պէտք է կրկնել ամեն տան վերջում։

Երկինքը պարզ է, ծովը հանդարտած,
Դաշտը գեղեցիկ ծաղկով զարդարուած,
Կամար ունքերով, սև սև աչերով,
Երկինք է նայում, հայուհին կանգնած։

Չի ուզում զատուել նա ծովի ափից,
Բաղդն է անիծում, դժգոհ իւր կեանքից,
Անմեղ դիցուհին, մինչև երբ արդեօք,
Պիտի չարչարուի քրտիկոշտ ձեռքից։

Լեռները ծովին տալիս են ողջոյն,
Կանգնած ծառայում նրան օրն իրուն,
Թէ և հոգ չկայ սարերի սրտում,
Մեր երեսին էլ չկայ կարմիր գոյն։

Զունիմ հանգիստ, չունիմ քուն,
Միշտ քո սիրովդ եմ այրվում,
Երեսիս ժպիտ չի դար,
Ապրումեմ տխուր—տրտում։

Օրըստօրէ մաշվումեմ,
Անհամբեր սպասումեմ,
Եկ նոր կեանք տուր տկարիս,
Այս երկտողով խնդրումեմ։

Մի թէ սիրտդ քարացած,
Ինձ պիտ թողնէ մոռացած,
Դու լաւ գիտես, սիրուհիս,
Որ քոյ սիրովդ եմ կացած։

Պահիր ինձ իբրև ծառայ,
Ես այդ էլ անձս առայ,
Երդվումեմ Տիրոջ առաջ,
Քեզ երբէք չեմ մոռանայ։

Դու ինձ ինչպէս մոռացար,
Թողիր անտէր—հեռացար,
Հոգեակ, խղճա իմ կեանքին,
Մահու պատճառ մի դառնար։

1901 թ. Տարարի ժանտախտի առթիւ երգուած.

Մալ ու մալալս ջարդեցին,
Քիրայ քարվանս կտրեցին,
Տղէքս անօթի թողեցին...
Ես ում էրթամ գանգատ անեմ,
Որ իմ դարտին դարման ճարեմ։

Երկնքից էկաւ պատուհաս,
Քաղաք թէ գեղ կրեց վնաս,
Մարդ չը մնաց ցաւից անմաս...
Ես ում էրթամ գանգատ անեմ,
Որ իմ դարտին դարման ճարեմ։

Թացը չորի հետ վառեցին,
Սաղ, թէ հիւանդ կոտորեցին,
Տկլոր մնաց խեղճ գեղացին...
Ես ո՞ւմ էրթամ գանգատ անեմ,
Որ իմ դարտին դարման ճարեմ։

Էրկաթ մաշինէն ամեն տեղ,
Կերթայ կուգայ քաղաք թէ գեղ,
Մենք շատցեր ենք, տեղերս նեղ...
Ես ո՞ւմ էրթամ գանգատ անեմ,
Որ իմ դարտին դարման ճարեմ։

Ձմեռն էկաւ վրայ հասաւ,
Մերկ մնացինք— չունինք հալաւ,
Տարին վրէքըս վատ անցաւ....
Ես ո՞ւմ էրթամ գանգատ անեմ,
Որ իմ դարտին դարման ճարեմ։



Վաղամեռիկ Կարապետ Զիրոդցեանի յիշատակին

ԴԻՄԱՌՆԱԲԱՐ ԵՐԳՈՒԱԾ

Մնաք բարեաւ, հեռանումեմ յաւիտեան,
Քոյր ու եղբայր, հայր և անուշ մայրիկ ջան,
Քանդեց մահը իմ բաղդս ամուսնական . . .
Այս օրէնքը հայր Ադամիցն է մնացել,
Դեռ ոչ մի մարդ նպատակին չէ հասել։

Զուր մի՛ ողբաք ու տոչորիք սիրելիք,
Ցիշատակս օրհնէ, մի՛ լար, իմ մայրիկ,
Այս աշխարհում ով է եղել երջանիկ . . .
Այս օրէնքը հայր Ադամիցն է մնացել,
Դեռ ոչ մի մարդ նպատակին չէ հասել։

Թողի փառքը այս աշխարհի, հեռացայ,
Կոկոն էի, չը բացուած թառամեցայ,
Իմ նազելի ամուսնուց բաժանուեցայ....
Այս օրէնքը հայր Ադամիցն է մնացել,
Դեռ ոչ մի մարդ նպատակին չէ հասել։

Ա՜խ, անգութ մահ, մատաղ կեանքս խլեցիր,
Սրտիս միջի խորհուրդները ջնջեցիր,
Դեռ շատ վաղ էր, լոյս լապտերս մարեցիր...
Այս օրէնքը հայր Ադամիցն է մնացել,
Դեռ ոչ մի մարդ նպատակին չէ հասել։

Պսակներով դագաղս զարդարեցին,
Երիվարիս սև շապիկը հագցուցին,
Ինձ էլ շուտով սառ գերեզման իջուցին . . .
Այս օրէնքը հայր Ադամիցն է մնացել,
Դեռ ոչ մի մարդ նպատակին չէ հասել։

Թող գարուն գալ, փթթին սիրուն վարդենիք,
Կանանչ մնան և մշտադալար դափնիք,
Կարապետիս չը մոռանաք ընկերտիք . . .
Այս օրէնքը հայր Ադամիցն է մնացել,
Դեռ ոչ մի մարդ նպատակին չէ հասել։

Ինձ բնաւ մեռելոց դասը մի դասէք.
Երբեմնապէս գերեզմանիս այց ելէք,
Մի մի բերան հոգւոյս ողորմի ասէք . . .
Այս օրէնքը հայր Ադամիցն է մնացել,
Դեռ ոչ մի մարդ նպատակին չէ հասել։

Տէրը թող ձեզ օրհնէ իւր սուրբ բերանով,
Ինձ յիշողին օրհնէ աւետարանով,
Միմեանց հետ երկար ապրէք սուրբ սիրով.
Մնաք բարեաւ, իմ ընկերներ աննման,
Ես ձեզանից բաժանվումեմ յաւիտեան։

Մազերիցդ տուր քնարիս լար հիւսեմ,
Մատներիս տակ թող մրմնջայ քո սէրդ,
Լոյս պատկերդ սրտիս մէջը նկարեմ,
Վառ սիրով նուագեմ սև սև ունքերդ։
Այդ սև աչերդ, այդ սև ունքերդ,
Այրում է հոգիս, սիրուն, քո սէրդ։

Սև աչերիդ թոյլ տուր միշտ դէպ ինձ նայեն,
Ինձ թնչ պէտք է պայծառ արևի լոյսը,
Եթէ թողնես շրթունքներդ համբուրեմ,
Էլ չեմ ուզեր կարմիր վարդերի բոյսը։
Այդ սև աչերդ, այդ սև ունքերդ,
Այրում է հոգիս, սիրուն, քոյ սէրդ.

Ծովը ընկել կը խեղդուիմ սիրուհիս,
Մակոյկ եղիր, շուտ հասիր ինձ օգնութեան,
Կրակն ընկել այրվումեմ մշտապէս,
Անձրև դարձիր փրկէ անուշ սիրական,
Այդ սև աչերդ, այդ սև ունքերդ,
Այրում է հոգիս, սիրուն, քոյ սէրդ։

ՅՐՇԱՏԱԿ
ԴԻՊԱՐԻՐ
ՍԻՍԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԻ 1929 ԹՎԻՆ

Գովեաս Նորազոյզ պսակեալներին

Ահա բացուան վարդ ծաղիկներ,
Ցնծումեն սոխակաց սրտեր,
Ո՛վ բարեկամք, մենք էլ ցնծանք,
Նոր զոյգն են մեզ փառք ու պարծանք։

Այս օրն է խիստ նախանձելի,
Կազմած սեղանը բարելի,
Մինչև լոյս պարենք, ծափ տանք,
Նոր զոյգն են մեզ փառք ու պարծանք։

Քէն ու ոխը սրտից հանենք,
Սուրբ սեղանը շրջապատենք,
Կարդանք սրանց մենք բարի կեանք,
Նոր զոյգն են մեզ փառք ու պարծանք։

Սրտի խղձերը կատարին,
Մինչ յաւիտեան սիրով ապրին,
Մենք էլ տանք գովասանք յարգանք,
Նոր զոյգն են մեզ փառք ու պարծանք։

Ածենք, երգենք, խնդանք, պարենք,
Ու միմեանց հետ համբուրուենք,
Մի օր էլ մենք ուրախ խնդանք,
Նոր զոյգն են մեզ փառք ու պարծանք։

Կեցցեն նոր զոյգերը ծաղկած,
Միշտ մնան ջափնով պսակած,
Ուրախ—զուարթ կեանք ունենան,
Աստուած պահէ միշտ անսասան։

Յանկացողները պէտք է դիմեն
Աշէքսանդրապոլ
ՀԵՂԻՆԱԿԻՆ
կամ
ԱՂԷՔ. ՄԵԼԻԹԱՐԵԱՆՑԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ.

13026

2013